ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ Ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 45 90 47

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

ՀԻՆԳՇԱԲԹԻ
15 ՀՈՒՆՎԱՐԻ 2015Թ. № 1 (344)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Հավաքվել էին Տաթեւի հավերժական փաճարում

Երկու տարվա սահմանագծում

Սիսական տան բոլոր վանքերի գլուխ եւ շնորհաբաշխության աղբյուր Տաթեւի մեծ ու աստվածահաճո տաճարում 2014թ. դեկտեմբերի 31-ին հավաքվել էին Սյունիքի մարզի տարածքային իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները, Հայաստանի զինված ուժերի 1-ին բանակային կորպուսի ներկայացուցիչները, հանրապետական ենթակայության մարզային ծառայությունների պատասխանատուները եւ, իհարկե, բարձրաստիճան հոգեւորականներ՝ Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմից:

Հավաքը կազմակերպվել էր Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի եւ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանի նախաձեռնությամբ:

Նախ՝ Սուրբ Առաքելոց (Սուրբ Պողոս-Պետրոս) եկեղեցում մատուցվեց պատարագ եւ հայրապետական մաղթանք՝ գլխավորությամբ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանի:

Հավաքվածները, միասնական աղոթք բարձրացնելով առ Աստված, բարեխոս ունենալով Տաթեւի վանքում ննջող Սուրբ Գրիգոր Տաթեւացուն, ինչպես եւ Սյունյաց աշխարհի զավակներ Սուրբ Հովհան Որոտնեցուն ու Սուրբ Մովսես Խոտանանցուն, խնդրում էին, որ Տերը օրհնություն բաշխի հայ ժողովրդին, խաղաղություն պարգեւի Հայաստանին ու Արցախ աշխարհին, որ ավելի զորանա ու ամրապնդվի հայոց նոր պետականությունը:

Մարզի աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունների կամքի այդ դրսեւորումը՝ միասին հրաժեշտ տալու անցնող տարուն եւ միասին դիմավորելու նոր տարին, նաեւ այլ խորհուրդ ուներ՝ երիցս արտահայտել հավատը

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 7

Ջոնաթան Գուդմանը մինչեւ ե՞րբ է հանդուրժելու Հրաչ Ջաբրայանի գոյությունը Կապանում

Համարի հարցը

Ի՞նչ է, այնուամենայնիվ, կատարվում Կապանի լեռնահանքային կոմբինատում. ահա գլխավոր հարցերից մեկը, որ 2014-ի տարեվերջին շրջանառվում էր մարզկենտրոնում եւ շրջանառվում է հիմա՝ տարեսկզբին:

«Սյունյաց երկիրը» դեկտեմբերին փորձեց հարցազրույց ունենալ այդ ձեռնարկության վարիչ Հրաչ Ջաբրայանի հետ: Բայց նա, Կապանում ապրելով սովորական «գաստարբայտերի» հոգեբանությամբ, հակառակ Հայաստանում գործող օրենքների, հրաժարվեց պատասխանել մեր հարցերին:

Լրատվամիջոցից նրա փախչելով, սակայն, ծագած հարցերը չէին կարող սպառվել կամ մարվել ինքնըստինքյան: Ընդհակառակը՝ հարցերը նոր սրություն ձեռք բերեցին վերջին շրջանում, երբ նա տեւական ժամանակով բացակայում էր Կապանից:

Եվ ստիպված մեր մտահոգություններին փորձում ենք հաղորդակից դարձնել ձեռնարկության սեփականատիրոջ՝ «Դանդի փրիշս մեթալս» ընկերության տնօրենների խորհրդի գլխավոր նախագահ Ջոնաթան Գուդմանին:

Հարգելի՛ պարոն Գուդման, Դուք շատ լավ տեղյակ եք, որ Կապանի լեռնահանքային կոմբինատը քաղաքաստեղծ ձեռնարկություն է: Իսկ դա նշանակում է, որ Կապանի լեռնահանքային ձեռնարկության վիճակը հետաքրքրում է մարզկենտրոնի ամեն մի բնակչի: Եվ ստեղծված իրավիճակի համապատկերի վրա անհրաժեշտություն է առաջացել քննարկել Հրաչ Ջաբրայանի վարքագիծը: Ո՞ւմ հետ կարող ենք քննարկել նրա վարքագիծը, ո՞ւմ հետ կարող ենք ճշտել արգահատելի բովանդակությամբ այն ասեկոսեների իսկությունը, որ պտտվում են նրա անվան շուրջ:

Արդեն ասացինք, որ Հրաչը Կապանում ապրում է սովորական «գաստարբայտերի» հոգեբանությամբ, այլապես ինքը հարգանքով կվերաբերվեր Հայաստանի Հանրապետության օրենքներից բխող մեր հարցումներին:

Մեկ օրինակ. 2014թ. ապրիլի 10-ին Հրաչը հայտարարեց, որ մոտ 200մլն դրամ է ներդնելու Կապանի նախադպրոցական հաստատությունների վերանորոգման գործում, ինչն ուրախությամբ ընդունեցինք: Պարոն Հրաչը, սակայն, հանրությունից թաքցրեց (անգամ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 2

Ոճրագործություն, որ բազում անհայտներ է պարունակում

Հայաց Սյունիից

Հունվարի 12-ին Գյումրիում տեղի ունեցած ոճրագործության առիթով ցնցված է նաեւ Սյունյաց աշխարհը:

Մարզի քաղաքներում եւ գյուղերում տեղի են ունենում մոմավառություններ՝ Ավետիսյանների ընտանիքի գնդակահարված վեց անդամի հոգու հանգստության համար:

Մարդիկ միաժամանակ աղոթում են եղեռնաբար ոչնչացված ընտանիքի փոքրիկի՝ վեց ամսական Սերյոժա Ավետիսյանի առողջության համար:

Տեղի ունեցածը, անշուշտ, հարված էր մեր հասարակությանն ու ինքնիշխանությանը: Իրավիճակն ավելի մթագնեցին մեր իրավապահների շփոթ պահվածքը, բնագավառի պատասխանատուների իրարամերժ հայտարարությունները, անվստահություն ներշնչող բազում հանգամանքներ…

Անտարակույս, դժվարին այս իրավիճակում սթափությունը երբեք չպետք է լքի մեզ: Բայց եւ առողջ տրամաբանությունը ենթադրում է՝ ա) հարցը պետք է քննարկվի բացառապես իրավական եւ ոչ թե քաղաքական ու զգացմունքային դաշտում, բ) հանցագործության մեջ կասկածվող անձնավորությունը պետք է կանգնի Հայաստանի Հանրապետության արդարադատության առջեւ (իսկ եթե ոչ, ապա պետք է դա հիմնավորվի կոնկրետ օրենքի կամ համաձայնագրի կոնկրետ դրույթով):

Հակառակ պարագայում, ինչպիսի բացատրություններ էլ մոգոնվեն, տեղի ունեցած ոճրագործությունն ու հաջորդած զարգացումները հավելյալ մշուշով կպատվեն, իսկ նախաքննության յուրաքանչյուր ընթացք եւ վերջաբան հավատ չեն ներշնչի՝ դրանից բխող հետեւանքներով:

Խոստովանենք՝ տեղի ունեցածը մեծ հարված էր հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամությանը: Բազմադարյան այդ բարեկամությունը նոր փորձության կենթարկվի, եթե եղեռնագործության նախաքննությունն ընթանա հայ մարդուն հավատ չներշնչող ճանապարհով: Մինչդեռ, ինչպես նշեցինք, անվստահություն ներշնչող հանգամանքներ արդեն իսկ կան:

Մեր իրավապահները, ըստ էության, բացատրություն պետք է տան ոճրագործությանը հաջորդած ամեն մի դրվագի, ծագած ու մինչեւ հիմա անպատասխան մնացած ամեն մի հարցի վերաբերյալ, այլապես հայոց ինքնիշխանության վերաբերյալ հայ մարդու՝ առանց այն էլ ճաք տված պատկերացումներն ավելի են խորանալու:

Եվ, իհարկե, համընդհանուր սգի այս օրերին բոլորիս մտահոգում են արյունալի ոճրագործության մոտիվը, նպատակը. արդյո՞ք դա չի արվել մեր երկրի ընթացքը շեղելու կամ հայ եւ ռուս ժողովուրդների միջեւ լարվածություն հրահրելու նպատակով:

Ուրեմն եւ՝ բազում առեղծվածներով ոճրագործությունը, թեեւ իր դաժանությամբ չի տեղավորվում մարդկային երեւակայության մեջ, մեզ չպետք է հանի ողջամտության հունից: Մենք իրավունք չունենք ազգովի դառնալու ինչ-որ մութ եւ դավադիր ուժերի ձեռքի գործիքը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Շարադրությունների մրցույթ՝ նվիրված Սերո Խանզադյանի ստեղծագործական ժառանգությանը

Սյունիքի մարզպետարանը եւ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը հայտարարում են շարադրությունների մրցույթ՝ **«Կարդալով Սերո Խանզադյանի ստեղծագործությունները»** թեմայով:

Մրցույթին կարող են մասնակցել մարզի բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների, հանրակրթական դպրոցների սովորողները:

Մրցույթի արդյունքներն ամփոփելու վերջնաժամկետը 2015թ. մայիսի 1-ն է:

Լավագույն երեք շարադրությունը կհրապարակվի «Սյունյաց երկիր» թերթի՝ Սերո Խանզադյանի 100-ամյակին նվիրված հատուկ համարում, իսկ հեղինակները կարժանանան դրամական պարգեւի:

Սյունիքի մարզպետարան
«Սյունյաց երկիր»

Ինչո՞վ էին զբաղված Սյունիքը ներկայացնող պատգամավորները 2014թ.

Ընտրողի ամբիոն

«Սյունյաց երկիրն» առաջին անգամ չէ, որ նման հարցով դիմում է Սյունիքի մարզի մեծամասնական ընտրատարածքներից ԱԺ պատգամավոր դարձած անձանց:

Իհարկե, նման հարցումի կարիք չէր լինի, եթե իրենք՝ պատգամավորները, սեփական նախաձեռնությամբ ու բարեխղճորեն ժամանակ առ ժամանակ հաշվետվություն տային ընտրողներին, մարդկանց պատմեին, թե ինչով են զբաղված հանրապետության օրենսդիր մարմնում:

2012թ. մայիսի 6-ին Սյունիքի մարզի թիվ 37 ընտրատարածքից ԱԺ պատգամավոր դարձած Հայկ Գրիգորյանը մեր նմանատիպ հարցումներին պատասխանելու ավանդույթ ունի: Եվ կարծում ենք՝ այս անգամ եւս կպատասխանի ընտրողներին հետաքրքրող այդ հարցին:

Ինչ վերաբերում է Արմեն Կարապետյանին… 2013թ. սեպտեմբերի 29-ին թիվ 38 ընտրատարածքից (ոչ մրցակցային ընտրության արդյունքում) պատգամավոր դարձած այդ պարոնը ոչ մի անգամ ընտրողներին չի պատմել, թե որքանով է կատարում իր նախընտրական խոստումները (այնքա՜ն շատ խոստումներ է տվել), թե ստացած աշխատավարձի դիմաց ինչ է անում ինքը: Իսկ ընտրողներն Արմենի հաշվետվությունը լսելու իրավունք ունեն:

Ինչեւէ, հարգելի՛ պատգամավորներ, հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, խնդրում ենք ներկայացնել հաշվետվություն պատգամավորական մեկամյա գործունեության մասին:

Ձեր պատասխանը տասը օրվա ընթացքում չստանալու դեպքում կդիմենք ԱԺ նախագահի կամ ձեր ընտրությունը երաշխավորած կուսակցության նախագահի օգնությանը: Իսկ ձեր հաշվետվությունը… խոստանում ենք ներկայացնել ընթերցողին՝ առանց որեւէ միջամտության:

«Սյունյաց երկիր»

Աջից՝ Ջոնաթան Գուդման, «Դանդի փրիշս մեթալս» ընկերության տնօրենների խորհրդի գլխավոր նախագահ

Ջոնաթան Գուդմանը մինչեւ ե՞րբ է հանդուրժելու Հրաչ Ջաբրայանի գոյությունը Կապանում

Համարի հարցը

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

մեր հրապարակային հարցումից հետո), թե ինչ սկզբունքով է ընտրել այդ աշխատանքները կատարող շինարարին, թաքցրեց շինկազմակերպության ու նրա պատասխանատուի անվանումները, թեեւ ՀՀ օրենքների համաձայն ի սկզբանե հրապարակված պիտի լինեին այդ անունները:

Տարին ավարտվել է, եւ գլուխը քարը՝ գաղտնի է պահում շինարարի անունը, թող գաղտնի պահի, բայց… Ուզում ենք պարզել, խոստացած 200մլն դրամի չափով ներդրումն իրագործվե՞ց, թե՞ ոչ, ո՞ր մանկապարտեզում ինչ աշխատանքներ կատարվեցին: Հարցը պատահական չէ, դեռեւս տարվա առաջին կեսին Կապանի մանկապարտեզներից մեզ հուշում էին ծպտված շինարարի թույլ տված թերությունների մասին: Հրաչն անուշադրության մատնեց մեր այդ հարցումը եւս («Սյունյաց երկիր», N316, 22 ապրիլի 2014թ.):

Իսկ ահա Կապանի կոմբինատի մի քանի աշխատողներ ուզում են ճշտել (եւ չգիտեն ում դիմել)՝ ա) ի՞նչ հանգամանքների պատճառով է Հրաչի եղբայրը հեռացել կոմբինատից, բ) ինչպե՞ս է ստացվել, որ կոմբինատում, Հրաչի եղբոր կողմից ընկերության անվտանգության համակարգը ղեկավարելու ընթացքում, գողությունները շատացել են, իսկ նա երբեք պատասխանողի դերում չի հայտնվել:

Նման դիպվածների թվարկումը կարող ենք շարունակել, բայց…

Հարգելի՛ պարոն Գուդման, մենք հիշում ենք 2011-ին Կապան կատարած Ձեր այցը: Հիշում ենք Ձեր ելույթը Կապանի մշակույթի կենտրոնի դահլիճում: Տոնական այդ օրը եւ՛ Դուք, եւ՛ Ձեր օգնականն այնքա՜ն շատ օգտագործեցիք «հայրենիք», «հայրենասիրություն» արտահայտություններն ու «Վարդան Մամիկոնյան», «Գարեգին Նժդեհ» անվանումները: Իհարկե, մենք այն ժամանակ այդպես էլ չիմացանք, թե խոսքը որ հայրենիքի, ինչ հայրենասիրության, որ Վարդան Մամիկոնյանի ու որ Գարեգին Նժդեհի մասին է: Բայց եթե նկատի եք ունեցել մեր իմացած հայրենիքը, հայրենասիրության մեր պատկերացումը, մեր իմացած Վարդան Մամիկոնյանին ու Գարեգին Նժդեհին, ապա Դուք չպետք է խուսափեք Հրաչ Ջաբրայանի՝ շատ վաղուց օրակարգային դարձած հարցը քննարկելուց: Եթե դրա համար հանկարծ բավարար հիմքեր չգտնեք, ապա կարող եք մի թեթեւ հայացք ձգել կոմբինատի ֆինանսատնտեսական գործունեությանը:

Իհարկե, Հրաչի գնալով Կապանը շատ բան է կորցնելու. այլեւս մակարոնատեսք մի քանի աղջիկ որոշումներ չեն կայացնելու մարզկենտրոնին առնչվող հարցերի վերաբերյալ, այլեւս չենք ունենալու կիսագրագետ բանսարկուի պիղծ խոսքից կախ ընկած նախավերջին ականջը, այլեւս հայտնի մանկապարտեզի ողորմելի վարիչը ստիպված չի լինելու անմեղ երեխաների շուրթերով ծոներգությամբ զբաղվել՝ առ Հրաչ, այլեւս ոչ ոք Կապանին նոր եւ խորթ արժեհամակարգ չի պարտադրելու՝ դեպուտատի թեկնածուի պահվածքին հանգույն, այլեւս հանրապետության ամենախոշոր ձեռնարկություններից մեկի ղեկավարը կուսակցական պրիմիտիվ խաղեր չի տալու (վա՜յ այն կուսակցությանը, որի լուսավորիչը Հրաչն է), այլեւս մեր հկ-ներից մի քանիսի «խիզախ» ղեկավարները ֆիննախի ակտերից հետո առիթներ չեն ունենալու (մի քանի մանեթի դիմաց) կոմբինատի տնօրենին երդում տալու՝ «Մենք քեզ հետ ենք...», այլեւս ոչ ոք կապանցիներին համատարած գողության մեջ չի մեղադրելու, այլեւս կապանցի հանքագործը ստիպված չի լինելու իր իրավունքներն ու շահերը պաշտպանել դատարանում, ոչ ոք այլեւս «հայրենասիրություն» բառը չի դարձնելու ծամոն եւ շիրմա, այլեւս Կապանի ընդերքի հաշվին փող դիզող ինչ-որ մեկը կապանցի չքավորին օգնելիս չի ասելու՝ «Ես ձեզ օգնում եմ իմ գրպանի հաշվին», ֆեյսբուքյան հարթակում նվազելու է Կապանին առնչվող քննարկում-շառլատանությունը՝ հայերեն բառ ու բանին անհարիր ոճով ու մտածելակերպով, այլեւս…

Իսկապես, այսքան «կորուստներ» ենք ունենալու Հրաչի հեռանալով, բայց ոչինչ… Մարդիկ մի կերպ կդիմանան:

Իրականում, մինչդեռ, Հրաչն ու իր սպասյակների փաղանգն այլեւս չպիտի կարողանան խոչընդոտել մարզկենտրոնի զարգացմանը. դա ժամանակի հրամայականն է եւ թելադրված է հանրային շահով: Եվ ելքը մեկն է՝ հնարավորինս արագ նրանց հեռացնել ասպարեզից, եթե նույնիսկ հարգարժան Ջոնաթան Գուդմանն այս անգամ եւս չտեսնողի ու չնկատողի կեցվածք ընդունի:

Ի դեպ, ժամանակն է խոստովանել՝ կապանյան ծագումով այդ սպասյակներն էին, որ կարողացան հաջողությամբ սեպ խրել կապանցի հանքագործների ու կոմբինատի ղեկավարության միջեւ:

Քաղաքաստեղծ այդ ձեռնարկության դրությունը, կարծում ենք, գոնե ուշացումով պետք է անհանգստացնի նաեւ Սյունիքի մարզպետարանին ու Կապանի քաղաքապետարանին:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ի գիտություն բաժանորդների

Ընթանում է «Սյունյաց երկիր» թերթի 2015թ. բաժանորդագրությունը: Հայտնում ենք, որ թերթի տարեկան բաժնեգինը ***10,000*** դրամ է:

Լուրեր

Հունվարի 8-ին՝ ժամը 03:02-ին, Հայաստան-Ադրբեջան սահմանային գոտում տեղի է ունեցել 3.9 մագնիտուդով երկրաշարժ, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 4-5 բալ: Երկրաշարժը զգացվել է ՀՀ տարածքում, մասնավորապես՝ Քաջարան՝ 5 բալ, Կապան եւ Սիսիան քաղաքներում՝ 3-4 բալ ուժգնությամբ: Երկրաշարժին հաջորդել է հետցնցում՝ 3.3 մագնիտուդ ուժգնությամբ: Հետցնցումը զգացվել է ՀՀ տարածքում, մասնավորապես՝ Քաջարան՝ 4 բալ, Կապան եւ Սիսիան քաղաքներում՝ 2-3 բալ ուժգնությամբ:

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը կատարել է «ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները» հետազոտությունը, ըստ որի՝ ՀՀ երիտասարդների միայն 28%-ն է զբաղված: Դրամական կամ ոչ դրամական եկամուտ բերող գործունեություն չունի հարցվածների 72%-ը: Այս խմբից 24%-ը գտնվում է ուսումնական գործընթացում, 48%-ը չունի աշխատանք եւ չի գտնվում ուսումնական գործընթացում, նրանք փաստացի գործազուրկ են, բայց չեն դասվում գործազուրկների թվին, քանի որ աշխատանք չեն փնտրել հարցման պահին, իսկ ՀՀ օրենսդրության համաձայն գործազուրկ են այն երիտասարդները, ովքեր չունեն աշխատանք, չեն գտնվում ուսումնական գործընթացում եւ փնտրում են աշխատանք, այդպիսին է հարցվածների 20%-ը: Եթե Երեւանում գործազուրկ է երիտասարդների ընդամենը 19%-ը, ապա գործազրկության ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են Շիրակի (30%), Սյունիքի եւ Արագածոտնի (27-ական %) մարզերում: Գործազուրկ երիտասարդների 75%-ը ձգտում է Հայաստանից դուրս աշխատելուն: Հարցման պահի դրությամբ արտագնա աշխատանքի համար Հայաստանից արդեն իսկ պատրաստվում էր մեկնել երեւանաբնակ երիտասարդների 9%-ը: Ամենաշատը պատրաստվում են մեկնել Արմավիրի մարզից՝ 15%, Սյունիքի մարզից պատրաստվում է մեկնել գործազուրկ երիտասարդների 5%-ը, հարցման պահին արտագնա աշխատանքի մեկնել պատրաստվողներ չեն եղել միայն Վայոց ձորից:

Դեկտեմբերի 26-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում շարունակվեց ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Արշավիր Խալափյանի՝ կաշառք պահանջելու գործով դատաքննությունը: Դատարանը լսեց գործով վկա Արթուր Գեւորգյանին: Վկա Ազատ Կույումջյանը դիմել էր դատարան, քանի որ, ըստ իր ներկայացրած տեղեկանքների, առողջական վիճակի պատճառով չէր կարող ներկայանալ, հիմք ընդունել իր նախաքննական ցուցմունքները: Դատարանը հրապարակեց Ա.Կույումջյանի նախաքննական ցուցմունքները: Իրավապահ մարմինները դատարան էին բերել մեկ այլ քրեական գործով նախնական կալանքում գտնվող եւ սույն գործով վկա Աշոտ Կույումջյանին: Վերջինս հայտարարեց, որ նախաքննության ընթացքում ունեցել է փաստաբան, եւ հիմա ցուցմունք կտա միայն իր փաստաբանի ներկայությամբ՝ պահանջելով դատարանից ապահովել նրա ներկայությունը: Դատարանը որոշեց հարգել վկայի իրավունքը եւ հրավիրել փաստաբանին: Հաջորդ դատական նիստը նշանակված է փետրվարի 6-ին:

Սուրեն Այվազյան - 100

Հայ արձակի վարպետներից մեկը

100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 1915թ. ՀՈՒՆՎԱՐԻ 9-ԻՆ, ԾՆՎԵՑ ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶՅԱՆԸ

ԱՐԿԱԴԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ
Հայաստանի գրողների միության անդամ

Սուրեն Այվազյանը Զանգեզուրի աշխարհի արգասաբեր հողի վրա ծնված այն քչերից է, որոնցով ժողովուրդը չափում է իր մեծությունը:

Արձակագիր Այվազյանը վաղուց նվաճել է ընթերցողի սերն ու համակրանքը: Նա ինքնատիպ ու սրտապարար պատկերներով ու հույզերով լի արձակագիր է եւ իր ծանրակշիռ տեղն ունի հայ դասական գրականության մեջ: Այվազյանի շատ գրքեր այսօր էլ մեծ հետաքրքրություն են ներկայացնում իրենց արդիականությամբ, գեղարվեստական բարձր ճաշակով ու վարպետությամբ: Այվազյանն իրենից հետո թողել է գրական մեծ ու արժեքավոր հարստություն, որը, սակայն, մեր գրականության պատմության մեջ դեռեւս իր արժանի գնահատականը չի ստացել: Հրապարակում եղած գնահատականները, որ կան գրողի մասին ասված, դեռեւս նրա մեծության իրական արտահայտությունը չեն:

Իսկ մեր օրերում, երբ խոսք է լինում հայ գրականության մեծերի մասին, հանիրավի կա՛մ շրջանցում, կա՛մ ուղղակի չնկատելու են տալիս Այվազյանի նման մեծությունը: Սակայն նույնիսկ այդ չնկատողներն անգամ համոզված են, որ Այվազյանի նման գրողին հնարավոր չէ պահել ստվերի տակ, քանի որ այն լույսը, որ զուտ այվազյանական է, միեւնույն է, փայլատակելու է, որտեղ եւ երբ էլ լինի: Համենայնդեպս գրականագետ արհեստավարժների չմահավան տրամադրությունները շատ դեպքերում են չեզոքանում ժողովրդական հզոր սիրո հեղեղի մեջ: Այվազյանի ազնիվ ու անկեղծ գրականությունը ժողովուրդ-ամբողջությունը շատ է սիրում: Իսկական գրողի համար այդքանն էլ հերիք է:

Եվ եթե անհատները չէ, ապա ժողովուրդ-ամբողջությունն իր հավաքական իմաստնությամբ զգում է, որ Այվազյանն այն միջակություններից չէ, որ մոռացվի

կամ ստվերի տակ մնա: Այվազյան սիրող, Այվազյան տեսնող, Այվազյան կարդացող զանգվածները համոզված են, որ մեծ գրողի վեպերը, վիպակներն ու պատմվածքները բոլոր առումներով արժանի են բարձր ու նորովի գնահատականի: Նա այսօր եւ հետո պիտի իր պատվավոր տեղն ունենա հայ գրականության վարպետների կողքին: Այդ իրավունքը նա վաղուց է նվաճել բակունցյան շնչով գրված իր անկեղծ, ճշմարիտ, հուզաթաթավ ու արդիական գրականությամբ:

Այվազյանը խելագարվում էր Զանգեզուրի համար: Ուր էլ լիներ, չէր մոռանում իր երկիրը, իր ժողովրդին:

Նա հաճախ էր լինում Գորիսում, հանդիպումներ ունենում ժողովրդի, մտերիմ-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 4

Բարեւ, Ասո՛ւր...

ԹԵՀՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ

«Ասում են՝ երջանիկներն են, որ ժամանակի մասին գաղափար չեն ունենում: Երջանիկ չեն եղել իմ ծնողները, որ չեն հիշել իմ ծննդյան թվականը: Իմ ծնունդը նրանց համար դժբախտություն է եղել: Հայրս շուտ է մեռել եւ կիսած տառապանքի իր բաժինն էլ թողել է մորս: Մայրս ասում էր. «Դու որ ծնվեցիր, մեծ կոտորած էր, առուն արցունք էր, առուն արյուն էր»: Եվ սա էլ իմ ծննդյան վկայականն է»:

1915-ն է, անշուշտ, մեր տարեցույցում արյունով ու արցունքով շաղախված թվական, որ եւ Սուրեն Այվազյանն ընդունել է որպես իր ապերջանիկ ծննդյան սկզբնաթիվ:

Հունվարի 9-ին լրացավ հայ մեծատաղանդ արձակագրի ծննդյան 100-ամյակը, ինչի առթիվ Խնձորեսկում Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը, ՀՀ ԶՈՒ 1-ին բանակային կորպուսի հրամանատար Տիգրան Փարվանյանը, գյուղապետ Սերյոժա Հայրապետյանը, գրողներ, մտավորականներ, մշակույթի աշխարհի բազում ներկայացուցիչներ ծաղկեպսակներ ու ծաղիկներ դրեցին գրողի շիրմաքարին՝ հարգանքի տուրք մատուցելով մեծանուն սյունեցու հիշատակին:

Այցը ձեռնարկել էր «Միրհավ» գրական ակումբը՝ Սուրեն Այվազյանի 100-ամյակին ընդառաջ հանդես գալով գրողի հոբելյանը հավուր պատշաճի նշելու հայտարարությամբ, ինչպես նաեւ ծննդավայրում գրողի կառուցած տանն արժանապատիվ գոյավիճակ տալու ծրագրային առաջարկներով, որոնք մեծ հնչեղություն ստացան եւ ձգողական դաշտ ստեղծելով՝ հոբելյանի առթիվ գրողի շիրմաքար-հուշարձանի շուրջը համախմբեցին բազմաթիվ այվազյանասերների:

Մարդաշատ էր գրողի այգին՝ «ծածկված սպիտակ լռությամբ»... *«Զյունե լռությունն ինձ համար դառնում է մտորում ու թախիծ: Ուզում եմ մտնել տուն, վառել ճրագս եւ լուսանկարների, տան առարկաների հետ խոսելով՝ ցրեմ այն միտքս, թե աշխարհը միայն սպիտակ մշուշ է, եւ ես մենակ եմ»,* – գրառել է Այվազյանն

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 4

Կյանքի ուղին

Հայ նշանավոր արձակագիր Սուրեն Այվազյանը ծնվել է 1915թ. հունվարի 9-ին Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում:

Դեռեւս վաղ մանկությունից ապագա գրողը ճաշակում է որբության բոլոր դառնությունները: Նա չորս տարեկան էլ չկար, երբ 1919 թվականին մեռնում է հայրը:

Ընչազուրկ ընտանիքը պահել-պահպանելու ծանր հոգսերն ամբողջությամբ ծանրանում են այրի Բոխչագյուլի ուսերին: Մայրը գյուղի ունեւորների եւ հարուստների տներում հաց է թխում, լվացք է անում, որ խնամի իր երկու որբին՝ Սերգոյին, Սուրենին: Դեռ նոր տառաճանաչ ավագ եղբայրը՝ Սերգոն, շուտով կտրվելով ուսումից՝ գնում է գյուղի տավարը պահելու՝ դառնալով մոր հույսն ու ապավենը: Ուսումնասեր մայրը, սակայն, հաղթահարելով կյանքի բոլոր դժվարությունները՝ փոքր որդուն՝ Սուրենին, չի կտրում ուսումից:

Փոքրիկ Սուրենը հաղթահարելով որբ երեխային բաժին հասած բոլոր տառապանքները՝ գերազանց առաջադիմությամբ ավարտում է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցը եւ 1930 թվականին ուսումը շարունակում Գորիսի մանկավարժական տեխնիկումում: Ուսումնառության տարիներին Ասուր-Սուրենը փայլում է իր գիտելիքներով՝ ցուցաբերելով նաեւ իր գրական-ստեղծագործական շնորհները: Նա այս եւ հետագա տարիներին (1930-1940) Գորիսի շրջանային «Կարմիր Զանգեզուր» թերթում տպագրում է մի շարք ոտանավորներ, գրական պատկերներ:

1934-ին ավարտելով մանկավարժական տեխնիկումը՝ Այվազյանն աշխատում է Գորիսի շրջանի Խանածախ եւ Տեղ գյուղերում՝ հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ:

Հատկանշական է, որ մանկության եւ պատանեկության դժվարին տարիներից ստացած տպավորությունները նրան ուղեկցել են ողջ կյանքի ընթացքում: Այդ դժվարին ու տառապալից ժամանակները միշտ էլ տխուր հիշողություններ են արթնացրել գրողի հոգում:

Այդ տպավորությունների արտահայտություններ են նրա «Տուր ձեռքդ, կյանք», «Ասուր, հե՜յ, Ասուր», «Խնձորեսկ» ստեղծագործությունները:

1937 թվականին Սուրեն Այվազյանի մի քանի ուշագրավ պատմվածքներ տպագրվում են «Խորհրդային գրող» եւ «Հոկտեմբերիկ» ամսագրերում:

1937 թվականի աշնանը Սուրեն Այվազյանը մեկնում է Բաքու, ընդունվում Կիրովի անվան պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը եւ 1942 թվականին՝ ավարտելուց անմիջապես հետո, զորակոչվում խորհրդային բանակ, մասնակցում Հայրենական մեծ պատերազմին:

Ծանր վիրավորվելուց հետո Այվազյանը վերադառնում է Բաքու եւ ապաքինվելուց հետո աշխատանքի անցնում Բաքվի՝ հայերեն լույս տեսնող «Կոմունիստ» թերթում: Այստեղ էլ ամբողջությամբ նվիրվում է գրական-ստեղծագործական աշխատանքի: Պատմվածքների առաջին հավաքածուն լույս է տեսնում 1947 թվականին՝ «Անավարտ գործը» խորագրով: 1950 թվականին գրողը տպագրում է իր «Խորածորցիք» վիպակը:

1953 թվականից մշտապես տեղափոխվում է Երեւան եւ բուռն թափով նվիրվում ստեղծագործական աշխատանքին:

1955 թվականին լույս տեսած նրա «Լեռնցիներ» վեպն արդեն ուշագրավ երեւույթ էր հայ գրականության մեջ:

Դրանից հետո մեկը մյուսի հետեւից լույս են տեսնում «Խիղճը» (1957), «Տուր ձեռքդ, կյանք» (1961), «Անշեջ կրակների կոչին» (1961), «Բարի առավոտ» (1964) պատմվածքները, վիպակներն ու վեպերը:

1967 թվականին Սուրեն Այվազյա-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 4

Հարցազրույց Սուրեն Այվազյանի որդու՝ Ավետիք Այվազյանի հետ

Վերջերս «Միրհավ» գրական խմբակը հանդիպում ունեցավ սյունեցի մեծանուն արձակագիր Սուրեն Այվազյանի որդու՝ Ավետիք Այվազյանի հետ, ով նույնպես գրող է, բնակվում է Ռուսաստանի Դաշնությունում եւ ստեղծագործական ծրագրերով գտնվում էր հայրենիքում:

– Պարո՛ն Այվազյան, անչափ հաճելի է ծանոթանալ ու հաղորդակցվել մի մարդու հետ, ով մեզ՝ սյունեցիներիս (եւ ոչ միայն) համար այնքան սիրված գրողի՝ Սուրեն Այվազյանի արժանավոր որդին է, ինքն էլ՝ մարդկային արարող տեսակ, ստեղծագործող անհատականություն, որ ընթերցողին ներկայացել է ուրույն գրաշխարհով: Նկատի առնելով, որ Դուք մեծանուն սյունեցու որդին եք, զրույցը սկսենք հենց այդ նոտայից. ի՞նչ եք ամենից առաջ ժառանգել Ձեր հորից՝ անհատական խառնվածքի, արժեհամակարգի, գրական նախասիրությունների առումով:

– Ինձ թվում է, որ տարիների ընթացքում մենք՝ բոլորս, ավելի ու ավելի ենք նմանվում մեր ծնողներին… Սակայն չեմ կարող ասել, որ ես հենց իմ հայրն եմ, քանի որ Այվազյանի նման երկրորդն անհնար է՝ լիներ:

Նա մեծ մարդասեր էր, ուրիշի տառապանքն իրենը համարող, ամեն երեւույթ շատ խորն ընկալող մարդ: Հայրենիքի կորուստն ու նրա ցավերը զարկերակի պես բաբախում էին նրա սրտում, պահեր էին լինում, երբ նա հրաբխի պես ժայթքում էր, եւ այլեւս անկարելի էր նրան կանգնեցնել… Ահա այսպիսի մի դեպք եմ հիշում. դեռ երեխա էի, եւ հայրս (հատուկ թույլտվությամբ) տարել էր ինձ Նախիջեւան, որպեսզի տեսնեմ մեզնից խլված այդ երկրամասի գյուղերը, եկեղեցիները, խաչքարերը: Հանկարծ ադրբեջանական մի գյուղում մեքենայի միջից նա նկատում է, որ թուրքի տան աստիճաններից մեկի փոխարեն սրբատաշ խաչքար է դրված: Քիչ անց ամբողջ գյուղն արդեն այդ տան առաջ էր. գոռում, աղաղակում էին, բայց Այվազյանն անդրդվելի էր, նա չէր հեռանում եւ շարունակում էր իր ճառը՝ մատը թափ տալով բոլորի վրա՝ թե ապրում եք մեր հողի վրա, գոնե մեր սրբությունները մի՛ պղծեք… Մինչեւ հիմա աչքիս առաջ է այդ պատկերը՝ հայրս՝ իր ճերմակ, հետ սանրած մազերով, շրջապատված հունից դուրս եկած ադրբեջանցիներով… Թուրք կանայք կրակի բոցերի պես թպրտում էին այս ու այն կողմում… Մեր վախեցած վարորդը, շիկացած մքնոլորտը… Բայց չհամարձակվեցին վնասել մեզ, որովհետեւ նրա ներքին խառնվածքն ու արտաքին տեսքն այլ խորություն եւ ուժ ունեին:

– Ընթերցողին ներկայացել եք 1990 թվականին հրատարակած «Այ հեր, եկել եմ» խոսուն խորագրով պատմվածքնե-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 6

Կյանքի ուղին

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 3

նը հրապարակ է հանում իր նշանավոր գործերից մեկը՝ «Ճակատագիրն հայոց» պատմավեպը, որը մեծ հռչակ է բերում հեղինակին: 1971-ին հրատարակվում է «Կա եւ հետմահու կյանք» ինքնատիպ ստեղծագործությունը: 1972 թվականին լույս է տեսնում վարպետ արձակագրի «Գարունս ծյուների տակ» խոհափիլիսոփայական արձակ բանաստեղծությունների ժողովածուն:

1976-ին Այվազյանը հրատարակում է իր նշանավոր «Առավոտ լուսո» վեպը: Հետմահու լույս են տեսնում Այվազյանի «Խնձորեսկ» եւ «Ասուր, հե՜յ, Ասուր» ինքնակենսագրական գրքերը:

Այվազյանն ամուսնացել է երկու անգամ: Առաջին կնոջից՝ ծագումով արցախցի Մարգոյից ունեցել է երեք զավակ՝ երկու աղջիկ, մեկ տղա:

Երկրորդ կնոջից՝ թարգմանչուհի Հռիփսիմե Կարապետյանից, ունեցել է մեկ զավակ՝ Ավետիք Այվազյանը:

Այվազյանի գրքերը թարգմանվել են աշխարհի տարբեր լեզուներով, այդ թվում՝ ռուսերեն, ուկրաիներեն, պարսկերեն, բուլղարերեն:

Նշանավոր գրողը մահացել է 1981թ. մայիսի 19-ին: Թաղված է հայրենի գյուղի իր առանձնատուն-թանգարանի բակում: ■

Բարեւ, Ասո՛ւր…

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 3

իր կյանքի տխուր պահերից մեկին: Այսօր քո պարտեզում, Ասո՛ւր, ծյունե լռություն չէ, եւ թախիծն է անէացել, եւ դու մենակ չես: Այսօր տոն է, եւ ծյունը չի կարող ծածկել գարունդ, բաց ու լայն է ճանապարհը, եւ քո աշխարհում հավերժական գարուն է. ընթերցողդ դեպի քեզ է քայլում պայծառ հայացքով…

Սուրեն Այվազյանի մասին խոնարհումի ու գնահատանքի խոսք ասացին ՀԳՄ Սյունիքի մասնաճյուղի նախագահ, արձակագիր Արկադի Ծատուրյանը, «Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանը, խնձորեսկցի գործարար Ժորա Ալեքսանյանը, Գորիսի պետական համալսարանի դասախոս Գրիշա Հարությունյանը, գրականագետ, «Միրհավ» ակումբի ղեկավար Թեհմինա Մարությանը, Խնձորեսկի միջնակարգ դպրոցի տնօրեն Վալենտինա Բալայանը:

«Միրհավ» գրական ակումբի անդամները հանդես եկան գրական ընթերցումներով՝ հուզառատ լիցքեր ու գույներ հաղորդելով օրվա խորհրդին: Հնչեցին Քաջիկ Դորունցի սրտառուչ բանաստեղծությունները՝ նվիրված հոգեկից ընկերոջը, ընթերցվեց գրողի բացառիկ կտակ-պատգամն իր հայրենակիցներին…

Ցրտաշունչ ու ձյունառատ օրը ջերմացել էր Այվազյանի լուսառատ աշխարհից ճառագող շողերով, ամեն ոք հոգուպահանջ էր զգում դեպի Այվազյանը գնալու, մեծ հոգու իմաստալից պատգամներին հաղորդակցվելու, նրա ստեղծագործության հոգեպարար լիցքերով ոգեշնչվելու:

Հիրավի, ծննդյան օրվա արարողությամբ արժանին մատուցվեց մեծ հային, սյունեցուն, գրողին: Տրվեց եւ հայտարարվեց Այվազյանական տարվա մեկնարկը, որ անպայմանորեն նշանավորվելու է Այվազյանի գրական հեղինակության ամրապնդման, նրա մարդկային ու ստեղծագործական կերպարի վերահաստատման, գրական անհրաժեշտ ու հրատապ ձեռնարկների կենսագործման քայլերով: ■

Հայ արձակի վարպետներից մեկը

100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 1915թ. ՀՈՒՆՎԱՐԻ 9-ԻՆ, ԾՆՎԵՑ ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶՅԱՆԸ

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 3

ների հետ: Ժամերով զրույցներ էր ունենում նրանց հետ: Իր հայրենի երկրում նա պարզվում էր, մանկանում, անկեղծանում, մոռանում ինքն իրեն, դառնում հողվոր, դառնում հովիվ, դառնում սարվոր… Նա անձանձրույթ լսում էր բոլորին, սիրում, սիրահարվում բոլորին, լիցքավորվում, ոգեւորվում, թափ առնում եւ հզոր ներշնչանքով մտնում իր մեկ սենյականոց բնակարանը՝ ստեղծագործելու:

Այվազյանն իր կյանքով ցույց տվեց, թե իսկական մեծերը որքան կարող են հասարակ լինել: Նա բարության եւ համեստության մարմնացում էր:

Ավագ սերունդը հիշում է նրան եւ կարոտում նրա կենդանությունը: Կրտսեր սերնդի համար Այվազյանն այն անմահությունն է, ումից պետք է դասեր առնել, ում պետք է նմանվել:

Մի օր խոսք բացվեց նրա գրված ու չգրված գրքերի մասին: Այվազյանը բազմանշանակ ժպտաց, ասաց.

– Իսկական գրողի չգրված գրքերն ավելի շատ են, քան գրվածները: Ոչ մի գրող դեռ չի հասցրել ասելիքն ասել այս աշխարհին: Իսկական գրողը միշտ էլ տառապում է ասելիքը մարդկանց ասել չհասնելու ցավից:

Այվազյանն այդպիսին էր: Նրա մտքում ու հոգում հարյուրավոր չգրված գրքեր կային:

Այվազյանն իր գրքերն այրումով ու մորմոքով գրեց՝ բարության սերմեր ցանելով ամենուր: Նա գիրք գրեց, որ շարունակվի Զանգեզուր լեռնաշխարհի խորախորհուրդ ավանդավեպը: Նա գիրք էր գրում, որ ինքը թեկուզ անհայտ մնա, բայց աշխարհին հայտնի դարձնի իր ժողովրդին:

Պետրոսյան Հովսեփի որդի Սարգիսը, որ Խնձորեսկում հայտնի էր Ուսուբօղլի անունով, ոտանավոր-բանաստեղծություններ է հորինել, գրել իր գյուղի պատմությունը: Ուսուբօղլին եղել է իր ժամանակի իմաստասեր խենթերից մեկը, որ ապրել է դատարկ ստամոքսով, բայց երազել շիտակ ու արդար կյանքի մասին:

Արձակագիր Այվազյանը շատ էր սիրում Ուսուբօղլուն՝ իր եւ նրա միջեւ իրական նմանություն տեսնելով: Գրողը հատկապես բարձր էր գնահատում Սարգիս Պետրոսյան Ուսուբօղլու անշահախնդիր նվիրվածությունը հայրենի ժողովրդին:

Այվազյանն Ուսուբօղլու մեջ փնտրում էր ինքն իրեն:

Նա ֆիզիկապես հրաժեշտ տվեց այս լույս աշխարհին որպես մի Ուսուբօղլի՝ դժգոհ ու անբավարար կյանքից ու իրականությունից: Փխրուն խառնվածք ուներ Այվազյանը, բյուրեղյա մաքրություն, միամտության հասնող պարզություն: Ինչ ասում էր, սրտինն էր ասում: Ջղայնանում էր, ամբողջ էությամբ էր ջղայնանում: Հոգու շիտակությունը չէր հանդուրժում ոչ մի ծռություն:

– Վարպե՛տ, շատ մի՛ ջղայնանա, պահպանի՛ր առողջությունդ, – խորհուրդ էին տալիս շատերը:

– Չեմ կարող, – ճակատին կնճիռներ հավաքելով՝ ասում էր նա: *– Ես, իհարկե, բարակ գետ եմ: Ինձնից ավելի վարար գետեր կան: Բայց ի տարբերություն շատերի, իմ հոսքի ճանապարհը շատ է թեք: Այդ պատճառով էլ ես հանդարտ հոսել չեմ կարող: Իմ հատակին ես չեմ կարող տիղմ կուտակել: Ես պիտի գահավիժեմ բարձունքներից, որքան էլ գլխիվայր լինի իմ ընթացքը: Ես հունս քերելով պիտի հոսեմ: Ես չեմ ուզում ցույց տալ, թե իբր ես լավ մարդ եմ, այլ ուզում եմ ցույց տալ, թե լավ մարդն ինչպիսին պետք է լինի:*

Բնությունն էր նրան այդպես ստեղծել՝ տաղանդավոր եւ գերզգայուն, եւ նա իր բնույթին երբեք հակառակ չգնաց: ■

Մտորումներ

Սուրեն Այվազյանը 100 տարեկան է

ՇՉՈՐՍ ԴԱՎԹՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

Դժբախտաբար, մեզանում կարծրացել է մի տխուր սովորություն, երբ ազգի մեծերի հոբելյանները կա՛մ չեն նշվում (նույնիսկ հիշվում), կա՛մ, էլ նշվում են հենց այնպես, ուղղակի մի բան անելու համար: 2015թ. հունվարի 9-ը եկավ ու անցավ, իսկ այդ օրը լրացավ մեծատաղանդ արձակագիր Սուրեն Այվազյանի ծննդյան 100-ամյակը: Եվ հիմա, երբ գրում եմ այս տողերը, դժվարության առաջ եմ կանգնում՝ չիմանալով, թե ինչպես պիտի կարողանամ ինչ-որ չափով գնահատել անցյալ դարի հայ արձակի դիմագիծը կերտող գրողներից մեկին, անթերի հրապարակախոսին ու գրական գործչին, մտածողին, հմայիչ մարդուն, իր ծննդավայրին նվիրված հայրենասերին, ազնվագույն անհատականությանը, կյանքում եւ գրական անդաստանում աննկուն մաքառողին, ճշմարտության ջատագովին:

Անշուշտ, Ակսել Բակունցի նման հզոր արձակագրից հետո գրիչ վերցնելու համար պետք էր ոչ միայն համարձակություն, այլ նաեւ մեծ տաղանդ ունենալ: Առավել եւս, որ Բակունցի ժամանակի ու միջավայրի, նրա կերպարների հոգեբանական ընդգրկումների կնիքը չէր կարող չազդել հետագա ստեղծագործողների վրա: Սակայն Սուրեն Այվազյանն իր մեծ նախորդի ոտնահետքերով չգնաց: Նա կրեց միայն բակունցյան միջավայրի ազդեցությունը, իսկ գրելու ոճի, ստեղծագործական գործընթացի, թեմատիկայի եւ բազմաթիվ առումներով Սուրեն Այվազյանը մնաց ինքնատիպ, ինքնուրույն, ամեն ինչում ինքնայրումով ապրող գրող: Նրա կերպարները Սյունիքի պատմության քառուղիներով անցած մարդկանց սերունդների ծնունդն են, կրել են բազում զրկանքներ եւ մնացել անհողդողդ՝ մշտապես լավատեսական հեռանկարով: Իհարկե, սոցիալիստական գյուղի նկարագրություններում գրողը պիտի կաշկանդվեր՝ չկարողանալով տեղավորվել հանրահայտ կերպարներում, որովհետեւ այլ էր իրականությունը, այլ էին նրա մասին ներբողները: Մի առիթով, երբ հայ գրողներին քննադատել էին, որ խորհրդային գյուղացու կերպարն ամբողջականության մեջ չի ներկայացվում, Սուրեն Այվազյանը, կրակն իր վրա վերցնելով, ասել էր հետեւյալը. **«Մի գարնան, երբ ծիլերը հողի միջից նոր էին դուրս եկել, ուղղակի օդ շնչելու համար, իջա Խնձորեսկի խորխորատներից մեկը, քայլելիս նկատեցի, որ լեռնալանջերին՝ ձնծաղիկների կողքին, ավտոդողերի հետքեր կան: Նայում եմ՝ ավտոմեքենաները չեն կարող այդ լանջերով անցնել. ճանապարհ չկա, քար ու քերծ է շուրջը: Հեռվում նկատելով ոչխարների հոտերը եւ հովիվներին՝ որոշեցի մոտենալ ու պարզել առեղծվածը. ինչպես են ավտոմեքենաները հայտնվել այստեղ: Մոտեցա եւ ի՞նչ տեսնեմ, հովիվների ոտքերին ավտոդողերից կարված տրեխներ են: Հիմա այդ խորհրդային գյուղացիների կերպարն ինչպե՞ս եք ուզում նկարագրեմ»,** – ավարտում է խոսքը տաղանդավոր գրողը:

Այս ելույթի առթիվ Կենտկոմի առաջին քարտուղարի մոտ են կանչվում հեղինակը, ինչպես նաեւ Սերո Խանզադյանը, Գարեգին Սեւունցը եւ Համո Սահյանը, այսինքն՝ գրողների միության Սյունիքի թեւը: Սուրեն Թովմասյանը կուտակված զայրույթը թափում է Այվազյանի գլխին, պահանջում, որ «ընդունի իր թույլ տված սխալը»: Այս միջադեպը չի կաշկանդում շնորհաշատ գրողին: Հետագա տարիներին նա անընդհատ կրկնում էր, որ Կենտկոմի առաջին քարտուղարն ինքը պետք է անհանգստանա իր հանրապետությունում ապրող յուրաքանչյուր մարդու, այդ թվում եւ հովիվների ապրելակերպով: Ախր ինքը շատ էր սիրում իր ժողովրդին եւ, առաջին հերթին, հասարակ մարդկանց:

Տպագրված ունենալով 11 գիրք՝ Սուրեն Այվազյանը 1966թ. ընթերցողի դատին ներկայացրեց «Ճակատագիրն հայոց» պատմավեպը, որը մեծ արձագանք գտավ ոչ միայն Հայաստանում, այլ նաեւ խորհրդային հանրապետություններում եւ սփյուռքում: Տպագրված լինելով 20 հազար օրինակով՝ այդ գիրքը հաջորդ տարին տպագրվեց եւս 50 հազար օրինակով: Այն ժամանակների համար դա աներեւակայելի էր:

Հիշում եմ, որ հանրապետական մամուլը շատ բարձր գնահատեց այդ պատմավեպը ոչ միայն թեմատիկայի, այլ նաեւ լեզվական ու ոճական առումներով:

1971թ. լույս տեսավ ականավոր արձակագրի հաջորդ ժողովածուն՝ «Կա եւ հետմահու կյանք»՝ փոքր-ինչ խորհրդավոր վերնագրով: Այն ընթերցողին զարմացրեց ոչ միայն վիպակների եւ պատմվածքների նոր որակով, այլ նաեւ մանրապատումների շարքով: Հենց մանրապատումների խորհրդավորությունն ու փիլիսոփայական եզրահանգումներն էլ ժողովածուն դարձրին սեղանի գիրք: Դրանք կարելի էր անընդհատ վերընթերցել, համեմատել կյանքի երեւույթների եւ մարդկային հոգեվիճակների բարդ արծարծումների հետ:

Հետագա տարիներին լույս տեսան «Առավոտ լուսո» (1976) եւ «Խնձորեսկ» (1982) վեպերը, որոնք բարձրարվեստ ստեղծագործություններ էին: Սակայն նրա կարապի երգը մի սրտակեղեք վիպակ դարձավ՝ «Ասուր, հե՜յ Ասուր» վերնագրով: Թվում է, թե այն ինքնակենսագրական ակնարկ է ոտաբոբիկ մանկության, կիսաքաղց պատանեկության մասին, սակայն, ըստ էության, ձոներգ է խորհրդային տարիների հայ գեղջկուհու, իր որբուկներին տիրություն անելու համար անձնազոհության գնացող մոր մասին:

...Գրողի մոր հուղարկավորությունից հետո հավաքվել էինք Գորիսում՝ նրան հատկացված մի բնակարանում: Անընդհատ արտասվում էր, արցունքներն այտերով գլորվում էին, եւ, թրջված աչքերը հատակին հառած, պատմում էր մոր մասին: Նա խոսում էր, կարծես բեմում լիներ, իսկ մենք լուռ լսում էինք ու չէինք նկատում, թե ինչպես են անցնում ժամերը: Պատմում էր, որ մի անգամ երեխաներին սովից փրկելու համար մայրը շրջել էր հնձած արտերի խոզաններով եւ մի տոպրակ հասկ հավաքել: Դաշտապահը կտրել էր նրա ճանապարհը եւ մեղադրել, թե չհնձած արտերից էր քաղել հասկերը: Մայրն աղաղակել էր, հետո թախանձելով խնդրել, որ տոպրակը վերադարձնի, քանի որ, իրոք, հասկերը գետնից էր հավաքել: Ողբալով հետ էր առել տոպրակը, արցունքներն աչքերին, կանացի ափերով «կալսել» էր ցորենը, հետո տարել ջրաղաց, մի քանի բուռ ալյուր բերել տուն, հաց թխել:

Պատմում էր ու լաց լինում գրողը, հիշում էր, որ երբ գիշերները նստում էր գրասեղանի մոտ, մայրը չէր կարողանում քնել, տանջվում էր, կարծես ինքն էլ էր զգում ստեղծագործական երկունքի ցավերը, տաժանն ու գերությունը: Անկողնուց վեր էր կենում եւ ընկույզի մի բուռ միջուկ, մի քանի նռան հատիկ բերում, կարծես փորձում էր թեթեւացնել որդու հոգսը:

Ես միշտ հուզմունքով եմ հիշում գրողի մորը: Բոխչի աքերը եւ մայրս

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 6

Գնահատություն

ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԵՍ
Բանաստեղծ

ԿԱ ԵՎ ՀԵՏՄԱՀՈՒ ԿՅԱՆՔ

Պատմավիպասանության վերելք՝ անցած դարի 60-ական թվականներին եւ այդ ամենի մեջ յուրահատուկ կերպով առանձնանում էր Սուրեն Այվազյանի «Ճակատագիրն հայոց» պատմավեպը ե՛ւ ընդգրկման տեսակետից, ե՛ւ ներքին տրագիզմով: Ճասեմ՝ տրագիզմով, ասեմ՝ դրամատիզմով: Մի ներքին ազնվացնող դրամատիզմ կար Այվազյանի ամբողջ էության մեջ: Ուզում եմ նրա մի ուրիշ ժողովածուի վերնագիրը եւս հիշել, որ շատ բնորոշ է իրեն. «Կա եւ հետմահու կյանք»:

Այս մտայնությունը, այս հոգեբանությունը, որ կա հետմահու կյանք, ինձ թվում է՝ անցնում է Այվազյանի ողջ ստեղծագործության միջով: Նա այդպես ապրում, այդպես էլ մտածում էր:

Շատ հպարտ մարդ էր: Ոչինչ իր համար չէր խնդրում: Առանձնապես մոտ չէր մյուս գրողների հետ, առանձնացած էր իր մենության մեջ, պիտի ասեմ՝ հպարտ մենության մեջ: Նա ապրեց արժանապատիվ, հպարտ իր կյանքով: Նա ոչ մի բանի պակասություն չուներ: Ե՛վ փառք ուներ, ե՛ւ հռչակ, ե՛ւ գնահատվում էր, գուցե ոչ այնքան լայն, ժողովրդական միջոցառումների ձեւով, ինչպես իր գրչակից ընկերներից շատերը... բայց գրասեր մարդիկ, հասարակությունը, գրողները շատ լավ էլ գնահատում էին նրան: Բայց ինքն այդ ամենին վերաբերվում էր շատ հանգիստ: Իր պահվածքն էլ շատ առինքնող էր: Զուսպ, լուռ, բայց պիտի ասեմ՝ իր թվացյալ ներփակությամբ, առանձնացվածությամբ հանդերձ՝ բարեհամբույր էր եւ պատրաստակամ, միայն իրեն հատուկ՝ շատ մարդկային, ջերմ մոտեցումներով:

Հիշում եմ մեր առանձին, ոչ շատ իրենց քանակով, բայց բովանդակությամբ խորունկ զրույցներն ու խոսակցությունները, որոնց մի քանիսն էլ եղել են իր երեւանյան բնակարանում, ինչպես ասում են՝ հոգեշահ, ոգելից սեղանի շուրջը: Այդ զրույցներում էլ շատ զուսպ էր եւ ավելի շատ լսում էր բարյացակամ, պատրաստակամ:

Միշտ ինձ լավ եմ զգացել նրա ներկայությամբ: Բայց իրեն ավելի շատ ճանաչել եմ իր գրականությամբ, որ գալիս էր լրացնելու ոչ մեծաքանակ մեր հանդիպումների բովանդակությունը, որոնցից ես մի ազնվական հաճույք էի զգում:

Այո՛, հաճելի էր նրա հետ շփվելը: Չուներ հայ գրողին, արձակագրին, հատկապես բանաստեղծին բնորոշ շփերթ բնավորություն:

Բայց նա իր ազնվական զսպվածությամբ, սեղմությամբ, ներկայությամբ ավելի էր տրամադրում, ավելի էր առինքնում...

Սուրեն Այվազյանը հետք թողեց գրականության մեջ իր մնայուն, արժեքավոր գրքերով: Ես ուզում եմ նրա մի վիպակի վերնագիրն էլ հիշել՝ «Ասուր, հե՜յ, Ասուր», որ լույս տեսավ 1985 թվականին: Սա կարծես թե իր՝ Սուրեն Այվազյանի ականջներում մնացած մանկության ձայնն է, կանչն է իր բնաշխարհի, ծննդավայրի, լեռների, իր նախնիների կանչն է՝ Ասուր, հե՜յ, Ասուր: Այս կանչը միշտ նրա ականջներում էր:

Շատ էր կապված հողի հետ:

Ունեցել ենք եւ զանգեզուրցի այլ գրողներ, բայց Զանգեզուրի հետ Սուրեն Այվազյանի կապվածության մեջ մի միստիկ, խորհրդավոր իմաստ կար: Իրեն տեսնում էր Զանգեզուրում, իրեն գտնում էր Զանգեզուրում, իր նյութը Զանգեզուրի բնաշխարհն էր, որի մեծ երգիչը, պատմիչը մնաց ինքը՝ Սուրեն Այվազյանը:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

ԱՅՎԱԶՅԱՆԻ ՎՐՉԻՆ-ԳՐԻՉԸ

Իսկական գեղագետի գրչին արժանի էջեր կան Սուրեն Այվազյանի ծավալուն ստեղծագործությունների մեջ՝ վեպերում: Կան նաեւ մարդկային բնավորությունների՝ մինչ այդ չհայտնագործված նրբագծեր, ժողովրդական մտածելակերպի տարրեր, ժողովրդական լեզվի համ ու հոտ: Ինչ որ է, այդ վեպերը ժամանակին գտել են իրենց ընթերցողին եւ այսօր էլ՝ վերահրատարակվելու դեպքում, ընթերցողներ կունենան:

Իմ կարծիքով Այվազյանն ուժեղ տաղանդի տեր էր, բանաստեղծական-նկարչական-գեղանկարչական զգացողությամբ են հարուստ նրա պատմվածքները:

«Խնձորեսկը», որն ասես հեռավոր արձագանքն է Բակունցյան «Միրհավի», կարող է պատիվ բերել ամեն մի գրականության:

Մեր բարձր ու խոր բնաշխարհում ծերպ ու ծալքերի ինչքան թաքուն, չնկատված պատկերներ կմնային, եթե չլիներ Սուրեն Այվազյանի վրձին-գրիչը: Ցավալի է Սուրեն Այվազյանի հեռացումը...

Կուզենայի, որ ապրեր եւ ինքն էլ իր ձեռքով կազմեր իր երկերի ընտրանին: Բայց ինչ արած, ով էլ կազմի, այդ ընտրանու տեղը մեր դասական գրականությունն է:

ՍԵՎԱԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր

ՆՐԱ ՎԵՊԵՐԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ԱՐԺԵՔ ԵՆ

Յոթանասնականների գեղարվեստական շարժման մեջ նշանակալից է Սուրեն Այվազյանի դերը՝ մասնավորապես պատմվածքի եւ վեպի ժանրային սկզբունքների խորացման ու հարստացման առումով: Նրա ստեղծագործությունների հիմքում միշտ ընկած են կենսական խնդիրներ, իրական բախումներ, կենդանի մարդիկ ու մարդկային ռեալ հարաբերություններ:

«Բարի առավոտ», «Ճակատագիրն հայոց», «Առավոտ լուսո» վեպերը գեղարվեստական կայուն արժեքներ են եւ մնայուն տեղ են ապահովել Սուրեն Այվազյանի համար արդի հայ արձակի մեջ: Անխաթար մեծ սեր, սիրո հետ մեծ ցավ, մարդկային խոր դրամաներ, որոնք ծնվում են մեծ կարոտից: Ահա թե ինչ են բերում Այվազյանի պատմվածքները:

«Ճակատագիրն հայոց», «Առավոտ լուսո», «Տուր ձեռքդ, կյանք», «Բարի առավոտ», «Խնձորեսկ» վեպերի եւ բազմաթիվ բարձրարվեստ պատմվածքների, տասնյակ մեծ ու փոքր ստեղծագործությունների հեղինակ Սուրեն Այվազյանը դարձավ հայ արձակի անվանի դեմքերից մեկը՝ իր բազմաժանր երկերով՝ վեպ, վիպակ, պատմվածք, նովել, արձակ բանաստեղծություն, մանրաքանդակ, ակնարկ, նոթագրություն եւ այլն:

«Ճակատագիրն հայոց» պատմավեպը արդիական հնչեղություն ունեցող բարձրարվեստ ստեղծագործություն է:

«Սովետահայ գրականություն», 2-րդ հատոր, էջ 214.

Հարցազրույց Սուրեն Այվազյանի որդու՝ Ավետիք Այվազյանի հետ

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 4

րի ժողովածուով: Ինչպե՞ս գրվեց Ձեր առաջին գործը, ինչպե՞ս բացահայտեցիք Ձեր մեջ ապրող գրողին, գրի մարդուն: Գրելու ձիրքը տրվա՞ծ եք համարում, թե՞ արյան յուրօրինակ կանչ:

– 18 տարեկան էի… Հայրս արդեն տարուց ավելի էր, որ հեռացել էր կյանքից… Հենց իր նման... թեյի բաժակը սեղանին դրեցի ու գրեցի իմ առաջին պատմվածքը: Մինչեւ հիմա նախանձով եմ նայում այդ պատմվածքին, շատ հեշտ գրվեց, նույնիսկ չեմ մաքրագրել, պարզապես մեքենագրեցի ու մայրիկիս խորհրդով տարա «Ավանգարդ» թերթի խմբագրություն: Մի քանի օր անց այն տպագրվեց: Ապա սկսվեց մի անսպասելի իրարանցում: Նախ՝ խմբագրությունը ողողվել էր ընթերցողների նամակներով, որոնք «Ավանգարդը» հրապարակում էր իր համարներում՝ «Հավատ» խորագրի ներքո, ինստիտուտում դասախոսներս էին շնորհավորում, տարբեր գրողներ, քննադատներ զանգահարում էին եւ շատ բարի խոսքեր ասում, ապա՝ առանց իմանալու, թե ում որդին եմ, զանգահարեցին Գեւորգ Էմինը, Սիլվա Կապուտիկյանը եւ ուրիշներ: Վերջապես «Այ հեր, եկել եմ» պատմվածքը ստացավ տարվա լավագույն ստեղծագործություն՝ «Ոսկե գրիչ» մրցանակը:

Պատկերացրեք իմ վիճակը, ես ընդամենը մեկ պատմվածք էի գրել, ուզում էի գոռալ՝ սպասե՛ք, ախր ես դեռ ինքս ոչինչ չեմ որոշել, բայց արդեն ուշ էր… Ստիպված էի, պարտավորված էի կամ էլ ինձնից կախված չէր ոչինչ, եւ ես դարձա գրող...

– Հիմա գրո՞ւմ եք: Տարիների ընթացքում փոխվո՞ւմ են արդյոք Ձեր ստեղծագործության թեմաները: Ժամանակը, իրադարձությունները, պատմությունը, միջավայրը որքանո՞վ են ազդում ձեր գրչի բովանդակության վրա:

– Իհարկե, տարիների ընթացքում մարդը փոխվում է, իսկ եթե ոչ՝ արդեն ինչ-որ բան այն չէ, ուրեմն չկա զարգացում, չկա առաջընթաց: Հիմա մենք, ասենք, երկիր ունենք, ժողովուրդ ունենք, գրողներ էլ ունենք, բայց եթե այս ամենը մնա այնպիսին, ինչպիսին կա, չլինի զարգացում, առաջխաղացում, արդյունքը դժվար թե գոհացնի մեզ: Մենք՝ բոլորս, պետք է փոխվենք, շատ կարեւոր հարց եք բարձրացրել, աշխատենք նոր մոտեցումներով, նոր գիտելիքներ ձեռք բերենք, նոր զարգացումներ հաղորդենք կյանքին, եւ, ըստ էության, գրողի դերն էլ դա պետք է լինի՝ նպաստել առաջընթացին՝ մարդու

առաջընթացին, գաղափարների ընկալման առաջընթացին:

Կարելի է, անշուշտ, «ուրախանալ» անցյալի ձեռքբերումներով ու հին մշակույթով, բայց առավել կարեւոր է, թե ինչ ենք ստեղծում այսօր, ինչ արժեքներ ենք կրում, ժառանգորդում… Ցավոք, մենք կա՛մ անցյալում ենք, կա՛մ ապագայում, իսկ ներկա ժամանակն անխնա կորստի ենք մատնում:

– Հայրենիք Ձեր այցելությունների ընթացքում մասնակցո՞ւմ եք արդյոք գրական հավաքների, մշակութային միջոցառումների: Շփվո՞ւմ եք գրական միջավայրի հետ: Ի՞նչ մտահոգություններ ունեք, այսօր ի՞նչ է փոխվել:

– Այո՛, մասնակցում եմ, սակայն ինձ թվում է, որ պետք է մի քիչ ավելի շատ մտածել միջոցառումների խորության ու բովանդակության մասին: Գրական միջավայրն էլ դեռեւս ամորֆ վիճակում է, դժվար է զարգանում եւ, ցավոք, հեռու է կայացած համարվելուց: Ու չգիտես՝ ում մեղադրես, կամ մեղադրելով կարելի՞ է հարց լուծել… Նայեք, թե ինչպես է ապրում մի աննշան էստրադային երգիչ եւ համեմատեք, թե ինչպես է ապրում գրողը: Այս խեղված վիճակը թույլ չի տալիս, որ ստեղծվի այն միջավայրը, որին լիաթոք կասենք գրական… Սակայն, բողոքելուց բացի, ասեմ, որ ես միշտ հարուստ եմ եղել արվեստագետ ընկերներով՝ նկարիչներ, գրողներ, երաժիշտներ, դերասաններ... Այդ մարդիկ թանկ են ինձ համար, որովհետեւ ծառայում են մի ընդհանուր գործի՝ գեղեցիկի ու սիրո պահպանմանը...

– Ինչպե՞ս եք վերաբերվում ժամանակակից գրականությանը: Լավածանո՞թ եք արդի գրական զարգացումներին, ինչպե՞ս կգնահատեք այդ ընթացքը՝ ձեռքբերումների եւ բացթողումների առումով:

– Ժամանակակից գրականություն... Այդ զարկերակը բաբախում է, գրականությունն էլ իր ընթացքի մեջ է, բայց որքանո՞վ ենք մենք առնչվում համաշխարհային գրական պրոցեսին, ո՞րն է ժամանակակից մարդու իրական դեմքը, օրախնդի՞ր են արդյոք ազգային նկարագրին վերաբերող հարցադրումները... Գրականությունը պետք է պատասխանի այս ու այլ հարցերի: Սակայն այսօր գրողն ինքն է անընդհատ հարցեր առաջ քաշում, իսկ ընթերցողին դրանք պետք չեն, նա ինքն է իր հարցերի պատասխանները փնտրում: Գրողը պետք է օգնի գտնել պատասխանները:

Ինձ թվում է՝ մի փոքր էլ համբերություն եւ արդեն ժամանակն է, որ հայ ժամանակակից գրականությունը սկսի իր նոր ընթացքը: Այդ ճանապարհին մի խոչընդոտ կա՝ վստահության կորուստը, բայց այն կարելի է վերականգնել եւ միայն մի դեպքում, երբ ի հայտ գան արժեքավոր գրական գործեր...

– Ի՞նչ խորհուրդներ ունեք երիտասարդ ստեղծագործողներին՝ ելնելով Ձեր կենսափորձից:

– Առանց մեծ սիրո դեպի ընթերցողը, այսինքն՝ դեպի ժողովուրդը, ոչինչ չի ստացվի... Սիրե՛ք մարդկանց, անկե՛ղծ եղեք շփումների, հարաբերությունների մեջ, անկե՛ղծ եղեք, երբ գրիչ կա ձեր ձեռքին եւ կտեսնեք, թե որքան սեր կվայելեք ձեր նվիրումի դիմաց … Գրականությունը մի բարդ ճանապարհ է, բայց միակն է կյանքին իմաստ հաղորդելու մեջ:

– 2015 թվականին լրանում է Սուրեն Այվազյանի ծննդյան 100-ամյակը, որը, անտարակույս, պետք է նշվի պատշաճ մակարդակով: Հույս ունենք, որ գրական-մշակութային հանձնառու կառույցները քայլեր կձեռնարկեն՝ ըստ հարկի տոնելու երախտառատ արձակագրի հոբելյանը: Այդ առթիվ հավաքական մտահոգություններ կան՝ կապված Այվազյանի՝ Խնձորեսկում կառուցած տունը թանգարան դարձնելու առաջնահերթ խնդրի հետ, որի լուծումը, թերեւս, ամենատեղին նվերը կլիներ գրողի 100-ամյակին: Առավել եւս, որ դա գրողի ամենամեծ ցանկությունն էր: Հնարավոր չէ՞ արդյոք բարեկարգել և գործարկել գոնե մեկ ցուցասրահ: Ինչպե՞ս եք տեսնում հարցի լուծումը: Մենք՝ որպես մշակութային-գրական կառույց, կարո՞ղ ենք արդյոք ինչ-որ կերպ նպաստել այդ ծրագրի իրականացմանը:

– 2015 թվականը ե՛ւ ինձ, ե՛ւ շատ-շատերի համար այվազյանական տարի է: Իհարկե, համամիտ եմ Ձեր այն կարծիքին, որ գրողի հոբելյանը Խնձորեսկի իր տունը թանգարանի վերածելու լավ առիթ է … Արդեն ինձ տեղեկացրել են, որ միջոցառումներ են լինելու Երեւանում, Գորիսում եւ Խնձորեսկում… Արդեն մի մեծ գործ է արվել Արկադի Ծատուրյանի կողմից. նրա կազմած «Մեր Այվազյանը» խորագրով հուշագիրքը գրողի կերպարի վերահաստատումն է, նրա մարդկային արժանիքների վերակոչումը, որը շատ կօգնի նոր սերնդին ընկալել, հասկանալ Սուրեն Այվազյանի տեսակը:

Վերջերս Ռուսաստանում եւս մեկ անգամ լույս տեսավ «Ճակատագիրն հայոց» պատմավեպը ռուսերեն, շքեղ հրատարակությամբ: Կարծում եմ, այս գործը կարեւոր է, պետք է վերահրատարակել Սուրեն Այվազյանի ամբողջ գրական ժառանգությունը: Հիմա փորձում ենք հրատարակել «Խիղճը» պատմվածքների ժողովածուն, «Տուր ձեռքդ, կյանք» հայտնի վեպը... Եթե նոր սերունդներին չմատուցենք այդ փառահեղ գրական արժեքները, ապա մյուս գործողությունները կկորցնեն իրենց իմաստը…

– Եթե հնարավորություն ունենայիք Հայաստան վերադառնալու, կգայի՞ք:

– Ես հիմա էլ Հայաստանում եմ… Տարին կիսվել է երկու մասի. մի մասը, երբ ֆիզիկապես եմ Հայաստանում, մյուս մասը, երբ հոգեպես եմ Հայաստանում՝ իմ պաշտելի հայրենիքում: Այդպիսի տարի դեռ չի եղել, որ չլինեմ Զանգեզուրում, Գորիսում, Խնձորեսկում. աննկատ գալիս ու գնում եմ…

Հարցազրույցը՝
Թեհմինա Մարությանի

Մտորումներ

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 5

արյունակիցներ էին: Ամեն անգամ ինձ տեսնելիս Բոխչի աքերը տալիս էր մորս անունը եւ լաց լինում, որովհետեւ նա երեք տարեկանից որբացել էր, քույրեր ու եղբայրներ չուներ, իսկ որբերի դառը ճակատագիրը միշտ ուղեկցել էր Սուրեն Այվազյանի մորը: Ահա թե ինչու «Ասուր, հե՜յ Ասուր» վիպակն այնքան անկեղծ, այնքան սրտառուչ, այնքան իմաստուն է ստացվել, որ ամեն տարի վերընթերցելիս զգում ես, թե ինչքան խորքեր ու ծալքեր կան այդ փոքրիկ վիպակում: Չեմ կարող նաեւ երախտագիտությամբ չխոսել Սուրենի տիկնոջ՝ Հռիփսիկի մասին, ում ջանքերով լույս տեսավ այդ վիպակը՝ գրողի մահվանից չորս տարի հետո, ինչպես նաեւ «Խնձորեսկ» վեպը: Հռիփսիկը նաեւ մեծ աշխատանք կատարեց՝ հավերժացնելու ամուսնու հիշատակը: Ափսոս, որ ինքն էլ շուտ հեռացավ կյանքից՝ որպես մխիթարություն ունենալով Ավիկին՝ ոչ պակաս տաղանդավոր արձակագրին:

Չի կարելի չընդգծել նաեւ մի հետաքրքիր հանգամանք: Սուրեն Այվազյանը մի տեսակ չէր ընդունում շրջապատ ասածը՝ լիներ գրական շրջանակներում, թե ընդհանրապես: Նա մենակությունն ավելի էր գերադասում: Թերեւս այդ էր պատճառը, որ Գորիսում մի բնակարան էր վերցրել, Խնձորեսկում էլ կառուցել մի առանձնատուն, այն էլ՝ գյուղի ծայրին, եւ հիսուն տարեկանից հետո հիմնականում այնտեղ էր ապրում: Նրան այցելելիս ինձ զարմացնում էր նրա ասկետական դրությունը, ամեն ինչում զուսպ, եւ ինձ մխիթարում էի մի տեղ կարդացած հետեւյալ տողերով. **«Տաղանդավոր մարդիկ, որպես կանոն, միայնակներ են, իրենք իրենց մեջ ամփոփված եւ սովորաբար այնտեղ ոչ ոքի չեն թողնում թափանցել՝ պահպանելով իրենց տաղանդի ամբողջությունը եւ աշխարհընկալման իրենց կուսականությունը»:** Այդ իմաստով նա նմանության աղերսներ ուներ Համո Սահյանի հետ: Հիշենք բանաստեղծի մենակության մասին քնարական մեկնությունները, մենակությունը մենակ չթողնելու փիլիսոփայական եզրահանգումը: Այդ ամենը Սուրեն Այվազյանին տանում էր նրան, որ նա ինչ-որ չափով ընկերություն էր անում Համո Սահյանի եւ Գարեգին Սեւունցի հետ:

… 1972թ., երբ լույս էր տեսել Համո Սահյանի «Սեզամ, բացվիր» ժողովածուն, շատերի ուշադրությունը գրավեց մի բանաստեղծություն, որը կարող էր դառնալ բանաստեղծի, արձակագրի, արվեստագետի, ինչու չէ, նաեւ ինտելեկտուալ կարողություններ ունեցող ամեն մի մարդու վարքագրի չափանիշ.

Եվ ի՞նչ է տվել ինձ բնությունը, -
Դավիթյան նորոգ իր հնությունը,
Իր ջրվեժների անքնությունը
Եվ հոգնահոլով իր կրկնությունը...
Իր քարափների համբերությունը,
Իր խղճի առաջ իր գերությունը,
Իր անդունդների փարողությունը,
Սեփական վերքերն ապաքինելու
Կարողությունը...
Իր սեւահողի խոնավությունը,
Մասրենու փշոտ խոնարհությունը,
Ինքնաբաշխումի ուրախությունը,
Ինքնամերժումի խիզախությունը,
Ինքնության պատիվն ու թանկությունը,
Ինքն իր մեծությամբ չպարծենալու
Երջանկությունը...

Եթե մարդը կրի այս վարքամատյանի 13 հատկանիշից թեկուզ մեկը, ապա արդեն լիարժեքությամբ կառանձնանա մյուսներից:

Սակայն ինքնաբաշխումի ուրախությամբ եւ ինքնամերժումի խիզախությամբ, ինչպես եւ սահյանական վերոհիշյալ սկզբունքներով ապրող արվեստագետը պիտի բախվեր նաեւ կյանքի ոչ բնական երեւույթներին: Սուրեն Այվազյանը մշտապես այդ երեւույթների ջրաղացքարերի արանքում էր:

Ամուսնացել էր երկու անգամ: Առաջին տիկինը բժշկուհի էր, երկրորդը՝ հրատարակչության աշխատակից: Ծանոթները երկուսին էլ դրական էին գնահատում: Ձավակներ ունեին, ուշադիր էին իրենց ամուսնու նկատմամբ՝ հաշվի առնելով նրա անհանգիստ բնավորությունը:

Տաղանդաշատ արձակագիրը թաղված է Խնձորեսկում՝ իր առանձնատան այգում: Ամեն անգամ, երբ գնում եմ այնտեղ եւ զգում, որ տարեցտարի նեղանում է դեպի այն տանող արահետը, վերադառնում եմ, Համո Սահյանի խոսքերով ասած, գերեզմանաքարի ծանրությունն ուսերիս վրա: ■

Սյունիքում նշվեց Սուրբ Ծննդի եւ Աստվածահայտնության տոնը

Հունվարի 6-ին մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբ ծննդյան եւ Աստվածահայտնության տոնը հավուր պատշաճի նշվեց Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի եկեղեցիներում: Ամենուրեք մատուցվեց Սուրբ եւ Անմահ պատարագ:

Սյունյաց աշխարհի հոգեւոր կենտրոնում՝ Տաթեւի վանքում, Սուրբ եւ Անմահ պատարագ մատուցեց Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանը:

Հրաշափառ արարողակարգի ընթացքում Մակար վարդապետ Հակոբյանը շնորհավորեց եկեղեցական դասին եւ Սյունիքի ժողովրդին՝ Սուրբ ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առթիվ:

Սուրբ պատարագի արարողությանը ներկա էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը եւ Տաթեւի վանքի 2015թ. խաչի քավոր, ՀՀ զինված ուժերի 1-ին բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանը:

Հունվարի 5-ի երեկոյան ճրագալույցի արարողություն կատարվեց, իսկ հունվարի 6-ին Սուրբ պատարագ մատուցվեց նաեւ մարզի քաղաքների եկեղեցիներում:

Կապանի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում այն մատուցեց տեր Վահան քահանա Հեբոյանը, այս տարի եկեղեցու խաչի քավորն Էդգար Բաղդասարյանն է:

Սիսիանի Սբ Գրիգոր եկեղեցում Սուրբ պատարագ է մատուցել տեր Ստեփանոս քահանա Հովհաննիսյանը, եկեղեցու 2015թ. խաչի քավորը Տարոն Մինասյանն է:

Մեղրու Սբ Աստվածածին եկեղեցու խաչի քավորն այս տարի Սերգո Գալստյանն է, այստեղ Սուրբ ծննդյան եւ Աստվիածահայտնության տոնին Սուրբ պատարագ է մատուցել տեր Ռաֆայել քահանա Խաչիկյանը:

Քաջարանի հոգեւոր հովիվ տեր Շիրակ քահանա Խանոյանը Սուրբ պատարագ է մատուցել Վերին Հանդի Սբ Աստվածածին եւ Քաջարան գյուղի Սբ Հակովբ եկեղեցիներում: Սուրբ Աստվածածին եկեղեցու 2015թ. խաչի քավորը Վարդան Մկրտչյանն է:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Օրինյալ է հայտնությունը Քրիստոսի

Օր օրի մեծանում է Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու այցելուների թիվը, իսկ կիրակի օրերին մատուցվող պատարագներին, ինչպես ասում են, «ասեղ գցելու տեղ չի լինում այնտեղ»: Եկեղեցին առանձնակի մարդաշատ էր Սուրբ ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի օրը՝ հունվարի 6-ին: Սուրբ պատարագին մասնակցելու էին եկել ընտանիքներով, երեխաներով…

Սուրբ եւ Անմահ պատարագը մատուցում էր տեր Ահարոն քահանա Մելքումյանը:

Պատարագի ընթացքում տեր հայրն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը՝ մեր տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առթիվ:

Տեր հայրը նաեւ շնորհավորեց Սուրբ պատարագի մասնակիցներին, բոլոր գորիսեցիներին ու հայ ժողովրդին:

Տոնական այս պատարագն այլ խորհուրդ էլ ուներ: Խոսքը վերաբերում է «խաչի քավոր» հասկացությանը: Սրա իմաստը հետեւյալն է. Սյունյաց թեմի առաջնորդի առաջարկով ընտրվում է եկեղեցուն նվիրված եւ հավատարիմ մեկը, ով էլ հանդիսավոր պայմաններում մեկ տարի ժամանակով ստանձնում է այդ խիստ պատվաբեր հոգեւոր պաշտոնը: Նա պատարագի մասնակիցների ներկայությամբ եւ վկայությամբ եկեղեցու սպասավորի ձեռքից վերցնում է մյուռոնով օրհնված ջրից հանված խաչը, չորացնում այն, համբուրում եւ իր հետ տանում տուն: Խաչը «խաչի քավորի» տանը մնում է 40 օր եւ միայն Տյառնընդառաջի տոնակատարության նախօրյակին քահանայի կողմից վերադարձվում է եկեղեցի:

Իսկ ո՞րն է «խաչի քավորի» անելիքն այդ ամբողջ ընթացքում:

Նա իր վարքով ու բարքով պետք է օրինակ լինի եկեղեցու բոլոր հավատացյալների համար: Ամբողջ տարվա ընթացքում «խաչի քավորը» նյութապես, բարոյապես, իր օրինակով նեցուկ է լինում եկեղեցուն, մի խոսքով՝ քավորություն անում՝ մեր պատկերացմամբ այս բառի բուն իմաստով:

Մեզ մնում է ավելացնել, որ «խաչի քավոր» պատվավոր տիտղոսը, պարտականությունը 2015 թվականին կրելու է ընտանիքի եւ եկեղեցու հավատարիմ զավակ ու նվիրյալ Կարեն Սամվելի Լազարյանը: Ամուսնացած է, ունի երկու դուստր եւ մեկ ուստր, աշխատում է Գորիսի պետական քոլեջի տնօրեն:

Սուրբ պատարագի արարողությանը ներկա էին Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը, Սյունիքի փոխմարզպետ Վարդան Դավթյանը:

Ամբողջ պատարագի ընթացքում եկեղեցու կամարների ներքո հնչում էր կանանց երգչախմբի հրաշալի ձայնը (ղեկավար՝ Աննա Համբարձումյան): Ովքեր երբեւէ չեն հաղորդակցվել այդ երգչախմբի բարձրարվեստ կատարումներին, նրանց հաճելի անակնկալ է սպասվում յուրաքանչյուր կիրակի: Հաճախե՛ք եկեղեցի եւ համոզվե՛ք ինքներդ:

Քրիստոս ծնավ եւ հայտնեցավ: Մեզ եւ ձեզ՝ մեծ Ավետիս: Օրհնյա՛լ է հայտնությունը Քրիստոսի:

Հ.Գ. Հունվարի 7-ին Կարեն Լազարյանը Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն նվիրեց Սուրբ Գրիգոր Տաթեւացու գեղանկարը (Ռոբերտ Կամոյան, 70x60, կտավ, յուղաներկ, 2010թ.):

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավաքվել էին Տաթեւի հավերժական փաճարում

Երկու տարվա սահմանագծում

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

Հայր Աստծո, նրա որդու եւ Սուրբ հոգու հանդեպ, ինքնամաքրվել եւ բարձրյալ Աստծուց մեղքերի թողություն խնդրել, ոգի առնել ներշնչման ակունք Տաթեւի վանքից, արտահայտել Սյունիքի աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունների ու զինական ուժի միասնությունը մեր պատմության ներկա ընթացքում:

Այնուհետեւ վանքի սեղանատանը տեղի ունեցավ նախատոնական հավաքույթ, որի ընթացքում ելույթ ունեցան Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանը, ՀՀ ԶՈՒ 1-ին բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանը, ՀՀ ԱԱԾ Սյունիքի մարզային կառույցի ղեկավար Արշակ Գալստյանը, «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը, Մեղրու, Ագարակի, Քաջարանի, Կապանի, Գորիսի քաղաքային համայնքների ղեկավարներ Արշավիր Հովհաննիսյանը, Մխիթար Զաքարյանը, Վարդան Գեւորգյանը, Աշոտ Հայրապետյանը, Վաչագան Ադունցը եւ Տաթեւի գյուղապետ Մուրադ Սիմոնյանը:

Ի դեպ, վերջին նման հավաքը Տաթեւի վանքում՝ անցնող տարուն հրաժեշտ տալու եւ նոր տարին դիմավորելու նպատակով կազմակերպված, տեղի էր ունեցել Գարեգին Նժդեհի օրերում, ինչը նշանակում է, որ Սյունիքում վերականգնվում է պատմական եւս մեկ ավանդույթ:

Իսկ Տաթեւի վանքի բակում դրվել էր տոնածառ, հնչում էր տոնական երաժշտություն:

Հավաքի մասնակիցները պայմանավորվեցին այս վայրում, որտեղ 1108 տարի շարունակ հանդիպում են երկինք եւ երկիր, հավաքվել մեկ տարի հետո նույնպես:

ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆ

Որտե՞ղ է Հայաստանի առաջին դաշնամուրը...

Մեղրեցիներն ու, ինչու ոչ, այունեցիները միշտ հպարտությամբ են նշում, որ Հայաստան բերված առաջին դաշնամուրը եղել է Մեղրիում: Ավանդաբար այդ դաշնամուրը համարվել է Մեղրու Սուրբ Աստվածածին եկեղեցում գտնվող հին դաշնամուրը, որը ներկայացրել են քաղաքի հյուրերին՝ որպես տեղի մշակութային առաջադիմության եւ զարգացած քաղաքակրթության ապացույց:

Մեղրու մեր ընթերցողներից ահազանգ հնչեց, թե դաշնամուրը եկեղեցուց ահա քանի տարի է՝ բացակայում է: Նույնիսկ ասեկոսեներ են շրջում, թե այն քանդել են, վաճառել են…

Մեղրի մեր այցերից մեկի ժամանակ լինելով եկեղեցում՝ վերոնշյալ դաշնամուրը տեսանք եկեղեցուն կից կառույցում, որտեղ տեղավորված են կիրակնօրյա դպրոցն ու հոգեւոր հոր կացարանը: Եկեղեցու աշխատակիցը նշեց, որ այն եկեղեցուց տեղափոխել են այստեղ, քանի որ ներսում խոնավ էր, հարմար չէր պահպանելու համար, իսկ այժմ էլ փակի տակ չէ, եւ քաղաք այցելող հյուրերն ու զբոսաշրջիկները գալիս-տեսնում են հին երաժշտական գործիքը:

Սույն դաշնամուրի վրա նշված է «Knabe & Thal» Berlin, այսինքն՝ այն արտադրված է Բեռլինում տվյալ ֆիրմայի կողմից: Դաշնամուրը պահվում է առանց համապատասխան պայմանների ու վերանորոգման: Երեցկինն էլ ասում է, որ իրենք վախենում են գործիքին ձեռք տալ՝ չվնասելու համար, այն ոչ մեկի հաշվեկշռում էլ չի գտնվում:

Տարեց մեղրեցիները պատմում են, որ Հայաստանի առաջին դաշնամուրը 1895-96թթ. է բերվել Մեղրի, երբ մեղրեցի Աղանի որդի Մկրտիչ Վաչյանն ամուսնացել է Գողթան գավառի Ագուլիս քաղաքի օրիորդ Եղիսաբեթի հետ: Եղիսաբեթն օժիտ է ստանում դաշնամուր, այն իր հարազատները Գերմանիայի Բեռլին քաղաքից բերել են տվել Թիֆլիս, այնուհետեւ՝ մինչեւ Ջուլֆա, հետո՝ Ագուլիս՝ նրա ծնողների մոտ: Մեղրեցի Վաչյանները 25 հոգով ջորիներով գնում են Ագուլիս եւ դաշնամուրը տեղափոխում Մեղրի:

Սուրբ Աստվածածին եկեղեցում տարիներով եղած դաշնամուրը, իհարկե, իր տեղում է եւ չի անհետացել, բայց այն, ինչը մեղրեցիներն իբրեւ Հայաստանի առաջին դաշնամուր են պատկերացնում, պարզվում է, ճիշտ չէ…

Մեղրեցի պատմաբան Նաիրա Հայրապետյանը պարզաբանում է, որ սա ամենեւին էլ Վաչյանների հայտնի դաշնամուրը չէ, այն տարել են Մեղրուց, թե ինչ է եղել եւ որտեղ է հայտնվել այդ արժեքավոր դաշնամուրը, հստակ ոչ ոքի հայտնի չէ:

Իսկ ներկայումս այստեղ ցուցադրվողն էլի հին դաշնամուր է, բայց կարող է լինել Մեղրիում բացված երաժշտական դպրոցի առաջին դաշնամուրներից… Այն սովորական դաշնամուր է, այլ ոչ ոսկե լարերով ու փղոսկրե ստեղներով, ինչպես համոզված են մեղրեցիները:

Միգուցե ժամանակն է, որ համապատասխան մասնագետները պարզեն, թե իրականում մշակութային ինչ արժեք ունի ներկայիս դաշնամուրը, միգուցե արժե այն վերանորոգել ու առավել ճիշտ պայմաններում ցուցադրել, եւ եթե այդքան շատ ենք ուզում հպարտանալու պարագաներ ունենալ, միգուցե արժե նաեւ գնալ իրական առաջին դաշնամուրի հետքերով…

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Մահացել է Գալուստ վարդապետ Դարբինյանը

2005 թվականի հոկտեմբերից Կապանի եւ Քաջարանի հոգեւոր հովիվն էր Գալուստ վարդապետ Դարբինյանը: Պաշտոնավարել է Հայ առաքելական եկեղեցու մի քանի թեմում, եղել աշխարհի 72 երկրում, իր ասելով իր համար այլեւս ոչ մի նոր բան չկար այս լուսնի տակ: Մինչեւ մարզկենտրոն գալը մեկ տարի Մեղրու Սուրբ Աստվածածին եկեղեցու սպասավորն էր: Մոտ տասը տարի արեւմտահայերենի առոգանությամբ Աստծո խոսքը հասցնում էր կապանցիներին, նաեւ մտահոգություն հայտնում, որ մարզկենտրոնում բավականին աղանդավորներ կան: Մի քանի ամիս առաջ հայր վարդապետը թողեց իր հոգեւոր ծառայությունը՝ հավանաբար առողջական խնդիրներից ելնելով, եւ մեկնեց Լիբանան, իր բնօրրանը՝ քրոջ մոտ:

Եվ բնական է, որ Ամանորի ու Սուրբ ծննդի կապակցությամբ նա պիտի շնորհավորանքներ ընդուներ Կապանի հավատացյալներից եւ ոչ միայն: Բայց հայր վարդապետի հեռախոսը համառորեն լռում էր: Եվ մենք ցավալիորեն տեղեկացանք, որ հոգեւոր հովիվը 2014թ. դեկտեմբերի 30-ին կնքել է մահկանացուն:

Լույս իջնի շիրմիդ, բարեպաշտ եւ աստվածաշնորհ Գալուստ վարդապետ Դարբինյան:

«Այունյաց երկիր»

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Կամո Հովհաննիսյան

Երկրային կյանքին հրաժեշտ տվեց Կամո Սարգսի Հովհաննիսյանը: Ծնվել է 1938թ. հոկտեմբերի 4-ին Ղափան քաղաքում՝ ծառայողի ընտանիքում: 1955թ. ավարտել է ծննդավայրի N2 միջնակարգ դպրոցը, 1958 թվականին՝ Երեւանի լեռնամետալուրգիական տեխնիկումը, 1969 թվականին՝ Երեւանի պետհամալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1958-1965թթ. նախ աշխատել է Դոնբասի ածխահանքերում, հետո՝ Ղափանի պղնձահանքային կոմբինատի 5/6 հանքում եւ Զանգեզուրի քարհանքվարչությունում՝ տեղամասի պետ: 1968թ. նոյեմբերին ընտրվել է ՀԼԿԵՄ Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար, իսկ 1970 թվականին՝ Ղափանի շրջանային ժողդատարանի նախագահ: Մի տեւական շրջան՝ 1974թ. հոկտեմբերից մինչեւ 1996թ. մարտն աշխատել է Կապանի միջշրջանային դատախազ, այնուհետեւ՝ ՀՀ տրանսպորտային դատախազի ավագ օգնական, ՀՀ գլխավոր դատախազության բաժնի դատախազ, Երեւան քաղաքի Շենգավիթի շրջանի դատախազ: 1999թ. մայիսից մինչեւ 2005թ. հոկտեմբերն աշխատել է ՀՀ արդարադատության խորհրդի գլխավոր մասնագետ: 2007թ. հունիսից մինչեւ 2012թ. հունիսն աշխատել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Մթնոլորտային երեւույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու:

Ունի երեք զավակ, վեց թոռ:

Արժանացել է կառավարական պարգեւների:

Մի խումբ ընկերներ

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Ներսես Ստեփանյան

2014-ի ավարտը Սիսիանի տարածաշրջանի բնակչության համար մռայլվեց մի տխուր իրողությամբ. կարճատեւ հիվանդությունից հետո մահացավ Այունիքի մարզում հմուտ տնտեսվարի համարում ունեցող, հանքային ջրերի «Տատնի» («Ներսես եւ Արսեն» ՍՊԸ) գործարանի տնօրեն Ներսես Ստեփանյանը:

Ներսես Ստեփանյանը ծնվել է 1941թ. Այունիքի մարզի Դարբաս գյուղում, սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրի միջնակարգ դպրոցում: Այնուհետեւ ընդունվել է Գորիսի գյուղատնտեսական տեխնիկումի անասնաբուժական բաժինը: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել Դարբաս գյուղի անասնաբուժական տեղամասում՝ անասնաբույժ-տեխնիկ: 1962թ. ամուսնացել է համագյուղացի Ամալյա Նավասարդյանի հետ, ունեցել են հինգ զավակ՝ երեք դուստր, երկու որդի: Աշխատանքին զուգընթաց ընդունվել է Երեւանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի անասնաբուժական ֆակուլտետը: Ավարտելով բուհը՝ շարունակել է աշխատել Դարբասի անասնաբուժական տեղամասում: 1968-ից մինչեւ 1970 թվականն անասնաբուժական տեղամասի վարիչն էր, որից հետո ընտրվել է Գետաթաղ գյուղի կոլվարչության նախագահ, տնտեսությունը ղեկավարել մինչեւ 1987-ը: Այդ թվականից Դարբասի կոլտնտեսության Շամբի տեղամասի վարիչն էր մինչեւ կոլտնտեսության լուծարվելը՝ 1991 թվականը: Դրանից հետո մենատնտես էր եւ իր որդիների՝ Արամի ու Արմենի օժանդակությամբ, ովքեր արտերկրում հաջողակ գործարարներ են, լծվել է հայրենի գյուղի (եւ ոչ միայն) շենացմանը: Կառուցել են երկու ձեռնարկություն՝ «Տատնի» հանքային ջրերի եւ պահածոների գործարանները: Ստեփանյան ընտանիքի ներդրումով Դարբասում կառուցվել է Սուրբ Ստեփանոս եկեղեցին: Երկու գործարանում Շամբ, Դարբաս եւ հարակից գյուղերից մոտ 120 մարդ ապահովված է աշխատանքով, իսկ արտադրանքն իրացվում է ոչ միայն հանրապետությունում, այլեւ նրա սահմաններից դուրս՝ ընդհուպ մինչեւ Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Պահածոների գործարանը հումքով ապահովելու նպատակով Ներսես Ստեփանյանն օժանդակ տնտեսություն էր ստեղծել՝ պտղատու ծառերով եւ բանջարաբոստանային մշակաբույսերով: Մինչեւ իր կյանքի վերջին օրերը կազմակերպում էր երկու գործարանի աշխատանքները եւ ծրագրեր ուներ գյուղում սոցիալական նշանակության խնդիրներ լուծելու (ճանապարհի բարեկարգում, խմելու ջրի մատակարարման բարելավում եւ այլն): Համապատասխան տարածք էր ձեռք բերել արտադրական նոր մասնաշենք կառուցելու համար: Անկատար մնաց այդ ծրագիրը, մինչդեռ նպատակ ուներ ընդլայնել արտադրությունը, ստեղծել կոնյակի գործարան:

«Այս գործարանները կառուցել ենք, որ ժողովուրդը չբռնի օտարության ճամփան: Գումարը, որ ներդրել ենք այս արտադրության մեջ, մեր տասը պորտին կհերիքեր, բայց մի՞թե մարդ ապրում է միայն հացիվ: Ինչ արել ենք, մեր ժողովրդի համար ենք արել», - «Այունյաց երկրի» հետ զրույցում ասել էր Ներսես Ստեփանյանը: Ներսես Ստեփանյանը հմուտ տնտեսվարի գործունեություն էր սկսել հյուսել: Ճանաչում ուներ հանրապետությունում, գյուղմթերք արտադրողների համաժողովների մշտական մասնակից էր: Նրա ղեկավարած հանքային ջրերի եւ պահածոների գործարանների արտադրանքն արժանացել է պարգեւների, մասնավորապես «Տատնի» հանքային ջրերի գործարանի արտադրանքը մայրաքաղաքում կայացած հայռուսական համաժողովի ժամանակ արժանացել է ոսկե մեդալի՝ արտադրանքի որակի եւ ձեւավորման համար:

Մի խոսքով, մի ողջ կյանք՝ նվիրաբերված հայրենի երկրամասին, - այսպես կարելի է բնութագրել նրա գործունեությունը, որ տեւեց մինչեւ իր երկրային կյանքի վաղաժամ ավարտը:

Ներսես Ստեփանյանն առօրյա կյանքում ընկերասեր, իր եզերքին նվիրված անձնավորություն էր, մարդկային փոխհարաբերություններում՝ զուսպ, նաեւ ազդեցիկ, պատասխանատվության մեծ զգացումով: Այդպիսին էլ նա կմնա ճանաչողների հիշողությունում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ է երեք սենյականոց բնակարան Կապանի Թումանյան 9 շենքի 5-րդ հարկում (թատրոնի հարեւանությամբ): Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել (077) 062802 հեռախոսահամարով:

Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 14.01.2015թ.: